

ԼԵԶՎԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅ-
ՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

ՈՒ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կապված հաղորդակցման պրոցեսի կոնկրետ պայմանների, նպատա-
կադրման հետ՝ մենք տարբեր կերպ ենք օգտվում համաժողովրդական լեզվի
ընդհանուր պաշարից. գիտական հոգվածում գործածում ենք լեզվական այլ
ատաղձ, քան պաշտոնական հաղորդագրության մեջ կամ ընկերական զրույ-
ցի ընթացքում: Քանի որ նման ընտրությունները կապվում են հասարակա-
կան կյանքում լեզվի որոշակի դերի հետ, ուստի լեզվական այդ տարբերակ-
ները գործառական բնույթ ունեն և ոճաբանության մեջ անվանվում են գոր-
ծառական ոճեր:

Դժվար չէ նկատել, որ ոճերի այսպիսի ըմբռնման հիմքում ընկած են
լեզվական բնույթի իրողություններ, այսինքն՝ դրանցում ուղադրություն է
դարձվում ոճերի ձևավորման լեզվական արտահայտության վրա:

Բայց չէ՞ որ լեզվական որևէ յուրահատկությամբ ձևավորված այս կամ
այն ոճը առաջին հերթին մարդկային լեզվամտածողության արտահայտու-
թյուն է, և դրանք բնութագրել՝ հաշվի առնելով ոճերի սոսկ լեզվական կող-
մը, կարծում ենք, միակողմանի կլինի, որովհետև յուրաքանչյուր ոճ ոչ
միայն լեզվական արտահայտություն է, այլև մտածողության եղանակ:

Գուրդեն Սևակը, խոսելով Թումանյանի մասին, նշում է, որ բանաստեղ-
ծի ստեղծագործություններում ժողովրդայնությունն արտահայտվում է ոչ
միայն ժողովրդի սովորույթների, նիստուկացի ոճալիստական պատկերմամբ,
այլև, առաջին հերթին, նրա լեզվամտածողության ճշմարտացի արտահայտ-
մամբ¹:

Սա նշանակում է, որ գեղարվեստական գրականությունը, որպես գոր-
ծառական ոճի յուրահատուկ տեսակ, բնութագրելի է ոչ միայն իր լեզվա-
կան կողմով, այլև մտածողության եղանակով: Գալով Թումանյանի ստեղծա-
գործությանը՝ պետք է ասել, որ 900-ական թվականներին բանաստեղծի ան-
ցումը դեպի «ժողովրդական-գրական» լեզվի գործադրման, արդյունք էր
«...գեղարվեստական խոսքի ժողովրդայնացման ամենամոռոցական և ամե-
նահետևողական տեսության»² ընդունման, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ժողո-
վրդական լեզվամտածողության արտահայտություն գեղարվեստական գրա-
կանության մեջ:

Ժողովրդական լեզվամտածողությունը լեզվի գործառական տարբերակ-
ներից հատուկ է խոսակցական: և որոշ վերապահումներով՝ նաև գեղարվես-
տական ու հրապարակախոսական ոճերին: Այն հիմնականում բնորոշ է ժո-
ղովրդական լայն զանգվածներին, ոոոոո աշխարհընկալման վաղնջական շրջ-
անում ճանաչելով և արժեքավորելով իրենց շրջապատող աշխարհը, նրա
յուրահատկությունները, դրանք ընդունել են որպես սեփական կենսափորձ.
ապա լեզվական արտահայտությամբ փոխանցել միմյանք: Նման եղանակով
ձևավորված խոսքը իրենից ներկայացնում է աշխարհաճանաչողության յու-
րահատուկ գործընթացի լեզվական դրսևորում: Ժամանակի ընթացքում այն

¹ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948,
էջ 128—177:

² Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978,
էջ 299:

բերնեբերան անցնելով՝ հղկվում է, մաքրվում և որոշակի իմաստների ձևեր-
բերումով վերածվում լեզվական կայունացած կառույցների, որոնք հաղոր-
դակցման հետագա շրջանում հանդես են գալիս որպես բազում անգամ գոր-
ծածված լեզվական պատրաստի միավորներ և, որպես այդպիսիք, գործած-
վում են առանց փոփոխության: Դրանք ընդգրկում են լեզվի իմաստակիր՝
բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակները:

Այսպես, վերցնենք ժողովրդական խոսքում մեծ տարածում ունեցող
խեղճ բառը: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» ի
թիվս այլ իմաստների, այս բառի համար նշվում են նաև կարեկցության առ-
ժանի, թշվառ, աղքատ իմաստները³, իսկ «Հայոց լեզվի հոմանիշների բա-
ռարանից» իմանում ենք, որ այդ բառը հոմանիշ է թշվառ, ռզմամեյի, խրդ-
նալի, անգոր, թույլ, անօգնական... 2) չքավոր, աղքատ, չունեւոր, կաւռայալ,
ընչագումբ բառերին⁴:

Երկու բառարաններից էլ երևում է, որ խեղճ բառը բազմիմաստ է, և
նրա իմաստներից մեկը չքավորության, աղքատության իմաստն է: Արդ,
ո՞րն է պատճառը, որ ժողովուրդը աղքատությունը, չքավորությունը բնորո-
շել է խեղճ բառով, որի առաջնային իմաստը նշանակում է թշվառ, ռզմա-
մեյի, անչար, անօգնական և այլն:

Իման այն է, որ ժողովուրդը դարերի ընթացքում իր կենսափորձով բազ-
միցս համոզվել է, որ աղքատ մարդը ժամանակի ընթացքում ձեռք է բերում
հիշյալ հատկանիշները, որն էլ ի վերջո ժողովրդի համար դառնում է նրա
կենսավիճակից բխող աշխարհաճանաչողություն: Եվ այնուհետև տվյալ
հատկանիշներն ունեցող մարդուն ժողովուրդը սկսում է որակել խեղճ բա-
ռով, որը դարերի ընթացքում կայունանում է նրա մտածողության մեջ, իսկ
մյուս կողմից՝ այն միանգամայն բավարարում է նրա (ժողովրդի) լեզվա-
կան զգացողությունն ու ճաշակը՝ հիշյալ իմաստներն արտահայտելիս, թեև
խեղճ բառի կողքին, ինչպես տեսանք, հայերենը ունի նրան հոմանիշ այլ
ձևեր, Հետագայում հիշյալ խեղճ բառի գործածությունը վերը նշված իմաստ-
ներն արտահայտելիս՝ հանդես է գալիս որպես ժողովրդի կենսափորձը և աշ-
խարհաճանաչողությունն արտահայտող պատրաստի միավոր, որը ժողովրդ-
դական լեզվամտածողության արգասիք է: Փաստորեն այդ միավորներն
իրենց գլխավոր սկզբնական իմաստների հետ մշտապես արտահայտում են
հավելյալ իմաստներ, վերաիմաստավորվում են, որը ժողովրդի կենսա-
փորձի արտահայտություն է: Այսպես՝

Աղքատ մարդիկ ենք, մեր ձորերի մեջ
Անց ենք կացնում մեր սև-սև օրերը.
Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ,
էդ հաստատ գիտե ինքը միայն, տերը (Հ. Թ., Եժ, հ. 1,
Երևան, 1969, էջ 64):

Ինչպես երևում է քառատողից, մարդկանց աղքատության չափը ներ-
կայացնելիս հեղինակին չեն բավարարել ծերունու խոսքի մեջ գործածված
աղքատ, զուրկ հոմանիշները, և նա դիմել է խեղճ բառին, որը ճիշտ կեր-
պով է արտահայտել ժողովրդի մեջ գոյություն ունեցող թշվառությունը: Սա
հենց ժողովրդի կենսափորձով ձևավորված լեզվական այն պատրաստի միա-
վորն է, որը հանդես է եկել որպես ժողովրդական լեզվամտածողության ար-
տահայտություն՝ «թարգման»:

Կամ՝ նույն ձևով խեղճ բառը հետևյալ օրինակներում արտահայտում է
խղճալի, անօգնական հոմանիշ իմաստները:

³ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972,
էջ 511:

⁴ Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 262:

Անսիրտ անհոգի հիշեցին նրա

Անճար մնացած խեղճ յարի մասին (Հ. Թ., ԵԺ, էջ 96):

«Ես մի խեղճ մարդ եմ, որտեղ մի խեղճ մարդ կա, դալիս ինձ է դառնում: Մոտ օրերումս էլ մի խեղճ մշակ յուր փալանով ե. մի տերտեր յուր փիլոսով շնորհ բերին մոտս»⁵: էլ շենք խոսում այդ նույն իմաստներն արտահայտող լեզվական մեկ ուրիշ պատրաստի կառույցի մասին, ինչպիսին խեղճ ու կրակ ձևն է, որի համար օրինակներ բերելն ավելորդ ենք համարում:

Ձևաբանական մակարդակում ժողովրդական լեզվամտածողությունը արտահայտվում է ձևաբանական զուգահեռ ձևույթների՝ դոյականների հոգնակերտ մասնիկների, հոլովման ու խոնարհման վերջավորությունների, բառաձևերի համապատասխան ընտրության և նպատակահարմար գործածության միջոցով:

Ժողովրդական լեզվամտածողությունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում շարահյուսական մակարդակում: Այստեղ այն հանդես է գալիս շարահյուսական տարբեր միավորների՝ նախադասության անդամների կազմման, բառակապակցությունների ձևավորման, պատրաստի նախադասությունների, շարադասության, միջանկյալության ու մեկուսացված անդամների բազմապիսի շեղումների, լեզվական թերի կառուցվածքների, անշաղկապության ու բազմաշաղկապության և լեզվական այլ կարգերի ասպարեզում⁶, Այդ բոլոր գործածություններում ժողովրդական մտածողությունը դրսևորում է ստանում ժողովրդի կողմից բազում անգամ գործածված և քննություն բռնած լեզվական պատրաստի կառույցների ձևով: Այսպես, տեղեկացնել բառի իմաստը ժողովուրդն արտահայտում է հարադրական կազմություն ունեցող խաբար տալ, գյուղի բարեշենությունը՝ խելք գլխին գլուխ, ընտանիքի բարվոքությունը՝ դռներ անասուն ունենալ, իսկ կնոջ անհավատարմության հակումը՝ աչքերում յուղ լինել կապակցություններով, որը ամբողջության մեջ հնչում է այսպես.

Եկած կլինի, որ խաբար տանի,

Թե խելք գլխին դեռ քանի գլուխ կա,

Ով յուր գտանք անասուն ունի,

Կամ որի կնգա աչքերում յուղ կա (Հ. Թ., ԵԺ, էջ 63):

Ինչպես երևում է, խոսքը կառուցված է բազում անգամ գործածված, ժողովրդի կենսափորձով ու աշխարհաճանաչողությամբ հաստատված լեզվական պատրաստի կառույցներով: Այդպիսի կառույցները կարող են լինել զանազան դարձվածքներ, առածներ, ասացվածքներ և այլն:

Հիշենք ժողովրդախոսակցական լեզվում այնքան տարածված միջանկյալության երևույթը, երբ բուն տրամաբանական խոսքը հանկարծ ընդհատվում է, և խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում որևէ իրողության նկատմամբ: Օրինակ, «Հառաչանքի» ձերուռու խոսքը այսպես է հնչում.

«Մեր նեղությունը... քեզ ինչպես հայտնեմ.

Թող հաստատ լինի մեր թագավորը,

Ես ընչի տեք եմ, խոսեմ նրա դեմ,

Բայց աստված կտրի մեր ֆաշած օրը»:

Այստեղ ձերուռին ցանկացել է ներկայացնել իրենց սոցիալական ծանր վիճակը, և խոսքն էլ սկսել է հենց այդպիսի նպատակադրմամբ, բայց ընդ-

⁵ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 11:

⁶ Ժողովրդական լեզվամտածողության դրսևորման, այսինքն՝ ժողովրդախոսակցական լեզվի ձևավորման յուրահատկությունների մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու, Բառ և խոսք, Երևան, 1978, էջ 38—40, Թ. Ա. Ղարաբաշյան, Անարկների ժամանակակից հայերենի խոսակցական լեզվի (տե՛ս Ժամանակակից հայերենի խոսակցական լեզուն, Երևան, 1981, էջ 52—120):

հատվել է հիմնական միտքը, և նա սկսել է իր վերաբերմունքն արտահայտել իշխանության և թագավորի նկատմամբ: Սա շափազանց տարածված երևույթ է ժողովրդախոսակցական լեզվում:

Պետք է նկատի ունենալ, որ հաղորդակցման գործընթացում ժողովրդական լեզվի լեզվատառոգության մեջ ձևավորված խոսքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի ենթագիտակցության մեջ արդեն պատրաստի լեզվական միավորների շարակարգված իրողություն, որը, պատկերավոր խոսք լինելով հանդերձ, առաջին հերթին հետապնդում է հաղորդակցման նպատակ և ապա՝ դեղագիտական:

Ժողովրդական լեզվամտածողության մասին խոսելիս, մեր կարծիքով, հայերենում պետք է առանձնացնել լեզվամտածողության մի ուրիշ եղանակ ևս: Լեզվամտածողության այդ տեսակը մենք առաջարկում ենք անվանել գրական լեզվամտածողություն:

Լեզվամտածողության այս եղանակը, ի տարբերություն ժողովրդականի, հատուկ է հասարակության առավել զարգացած, առավել կիրթ մասին: Այդ մասը հասարակության այն անդամներն են, որոնք իրենց մայրենի բարբառի և լեզվի խոսակցական տարբերակի կողքին յուրացրել են նաև նորմավորված գրական հայերենը և հաղորդակցման գործընթացում հիմնականում գործադրում են վերջինը:

Գրական լեզվամտածողությունը ընդհանուր առմամբ հատուկ է հրապարակախոսական, դիտական և պաշտոնական-գործարարական, ինչպես նաև գեղարվեստական գրականության լեզվին:

Մյուս կողմից պետք է նկատել, որ գրական լեզվամտածողությունը գնալով ավելի ու ավելի է ընդարձակում իր գործառական շրջանակները և աստիճանաբար նեղացնում է ժողովրդական մտածողության սահմանները: Դրա պատճառն այն է, որ հասարակությունը հակում է ցուցաբերում միօրինակացնելու հաղորդակցման գործընթացը լեզվի թե՛ բանավոր և թե՛ դրավոր տարբերակներում:

Ինչպիսի՞ յուրահատկություններով է աչքի ընկնում գրական լեզվամտածողությունը:

Այս հարցին պատասխանելու համար գիտական գրականությունից բերենք մի փոքրիկ հատված: Այսպես. «Ասացվածքը ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակներից մեկն է, որը սեղմ ու արտահայտիչ ձևով բնութագրում է կյանքի այս կամ այն երևույթը:

Ասացվածքներում արտահայտվել են ժողովրդի աշխարհըմբռնումը, նրա պատկերացումները կենսական հարաբերությունների, մարդու կոշման և այլ հարցերի վերաբերյալ:

Ասացվածքներն իրենց բնույթով շատ մոտ են առածներին, սակայն նրանցից տարբերվում են որոշ կողմերով: Առածի մեջ իմաստալից դիտողություններն ու մտքերը մարմնավորվում են այլաբանական պատկերներով և ունեն խրատական բնույթ: Այնինչ ասացվածքներում դրանք արտահայտվում են առանց այլաբանական հնարների ու փոխաբերական պատկերների, ուղղակի և անմիջական ձևով»:

Սա գրական լեզվամտածողության կառուցված գիտական մի խոսք է:

Ուշագրություն դարձնենք այս հատվածը ձևավորող լեզվական միավորներին և մյուս կողմից հիշենք, որ ժողովրդական լեզվամտածողությունը աշխարհաճանաչողության հիման վրա ձևավորված լեզվական պատրաստի կառույցների շարակարգային գործընթաց է, որը հաղորդակցվող կողմերին հնարավորություն չի ընձեռում լեզվական պատրաստի տվյալ միավորի սահմաններում ստեղծագործական ակտիվ մոտեցում ցուցաբերել:

Այլ է գրական լեզվամտածողությունը:

Ինչպես երևում է, այստեղ խոսքը ձևավորվել է ոչ թե նախապես գոյություն ունեցող և բազմաթիվ անգամ գործադրված պատրաստի կառույցներով, այլ լեզվական միավորների ազատ կապակցությամբ, որոնք ամեն մի նախադասության մեջ միավորվել են նորմավորված գրական հայերենի քերականական յուրահատկությունների համաձայն: Այս առումով գրական լեզվամտածողությունը ժողովրդականի համեմատությամբ առավել ստեղծագործական գործընթաց է: Կորովհետև հաղորդակիցները ստիպված են մշտապես հաշվի առնել լեզվի քերականական կանոնների պահանջները մի կողմից, և բառընտրության ու բառագործածության նպատակահարմարությունը՝ մյուս կողմից: Ժողովրդական մտածողության դեպքում երբեմն կարող են նորմավորված լեզվի քերականական կանոնների յուրահատկությունները հաշվի չառնվել: Այսպես՝ Ես քեզ օրինակ: Էս խոր ձորերում

Էս է չորս քսան տարիս լրացավ,

Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,

Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ (Զ. Թ., ԵԺ, էջ 67):

Այստեղ «Ես քեզ օրինակ» կառույցը ձևավորվել է գրական հայերենի քերականական կանոնների անտեսմամբ, թեև այն կառուցվել է ժողովրդախոսակցական լեզվի յուրահատկությունների հաշվառումով: Ուրեմն գրական լեզվամտածողությունը, ի տարբերություն ժողովրդականի, որոշ առումով լեզվական մեխանիկական շարակարգայնությունը փոխարինում է ստեղծագործականով: Սա՝ առաջին:

Երկրորդ. գրական լեզվամտածողության ընթացքում լեզվական պատրաստի կառույցները, որոնք ձևավորվում են այդ կապակցությունները կազմող միավորների սկզբնական իմաստների վերաիմաստավորման ճանապարհով, փոխարկվում են դրանց համազոր, հոմանիշ այնպիսի միավորներով. որոնք ժողովրդախոսակցական լեզվում համեմատաբար քիչ են գործածվում և դրա հետևանքով դեռևս չկայունացած, պատրաստի կառույցներ չդարձած միավորներ են: Այդ միավորների շարահյուսական հարաբերություններից բխող բովանդակությունը, զուտ հաղորդակցական նպատակ հետապնդելիս, ձևավորվում է հիշյալ բաղադրիչների սկզբնական, առաջնային իմաստներից, մի բան, որը հատուկ չէ լեզվական պատրաստի կառույցներին: Անվաճճ ներկայացնենք «Հառաչանքից» բերված նախորդ քառատողի օրինակով:

Ժողովրդական լեզվամտածողությամբ համեմված այս քառատողը կազմված է ժողովրդի կողմից գործածվող լեզվական մի շարք պատրաստի կառույցներից, որոնք մեծ վարպետությամբ կարողացել է գործածել բանաստեղծը՝ ստեղծելով գեղարվեստական խոսք: Եթե այս քառատողի ժողովրդական լեզվամտածողությունը գրականի վերածենք, այսինքն՝ քառատողում եղած լեզվական պատրաստի կառույցները փոխարինենք դրանց հոմանիշ միավորներով, ապա մոտավորապես կունենանք հետևյալ պատկերը.

Ես քեզ օրինակ = իմ օրինակով բացատրեմ, ես քեզ համար օրինակ եմ էս է = արդեն

չորս քսան տարի = ութսուն տարի

Ոչ մի խնդություն տեսա = ուրախություն չտեսա, չունեցա, չուրախացա իմ օրում = այդ ընթացքում, իմ կյանքում

(ոչ էլ մի անգամ) աչքս լիացավ = ոչ էլ առանց հոգսի ապրեցի:

Ինչպես երևում է, հիշյալ կայուն կապակցությունները փոխարինվել են դրանց հոմանիշ այնպիսի կառույցներով, որոնք ժողովրդի կողմից կամ քիչ են գործածվում, կամ բոլորովին չեն գործածվում և հիշյալ ձևերի հետ կա-

8 Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 1988, էջ 78—79:

յուն կապակցություններ չեն կազմում: Վերջինները տվյալ հանրության կողմից ընդունվում են որպես օրինակելի, որովհետև սրանք ձևավորվել են գրական լեզվի կանոնների համաձայն, իսկ լեզվական միավորներն էլ համապատասխանում են դրական նորմային⁹: Այդ ձևերը ինչ-որ չափով հեռացած են ժողովրդական կենդանի խոսքից և նրա համեմատությամբ արհեստականության տարր ունեն¹⁰: Ամբողջությամբ կամ մասամբ հրաժարվելով ժողովրդական խոսքի յուրահատկություններից՝ գրական մտածողությունը սկսում է զարգանալ իրեն հատուկ օրինաչափություններով:

Այդ օրինաչափություններն ընդգրկում են լեզվի թե՛ բառային, թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական մակարդակները:

Գրական լեզվի մտածողությանը նույնպես հատուկ է լեզվական պատրաստի կառույցների առկայություն, որոնք գոյություն ունեն գրական մտածողության հիման վրա ձևավորված գործառական բոլոր ոճերում: Այդպիսի կառույցներն են՝ խոսքի մաս, նախադասության անդամ, ուղիղ խնդիր, ներականական կարգ, գեղարվեստական կերպար, գեղարվեստական պատկեր, թե՛ հարթություն, ջերմային էներգիա, ֆառակուսի հավասարում, բերման ենթարկել, վարույթի տակ առնել, գինադադար կնքել, ամուր հիմքերի վրա դնել, մեկնարկ վերցնել, ցամաքային գործեր, գինված ուժեր, գերծայնային արագություն, երկրամերձ ուղեծիր, թռիչքի կառավարման կենտրոն, աֆիլեսյան զարդապար, առատության եղջյուր, դանայան կարաս, դամկլյաճ սուր, ավգյան ախոռ, վերջին մահիկան, կոտրած ժաշտակի առաջ կանգնել, կոլումբոսյան ձու, փաթորիկ մի բաժակ ջրում, արջի ծառայություն մատուցել, նոյի ագռավ, ֆավայան ճոխագ և այլն: Էլ չենք խոսում մասսայական հաղորդակցության ընթացքում այնքան շատ գործածվող լրագրային շտամպի և լրագրային ստանդարտի մասին, որոնք խոսքային պատրաստի կառույցներ են¹¹:

Արդ, ինչպիսի՞նչ յուրահատկություններ ունեն հիշյալ կառույցները և ի՞նչ հատկանիշներով են տարբերվում ժողովրդական լեզվամտածողության մեջ գործածվող լեզվական պատրաստի միավորներից:

Նախ պետք է ասել, որ գրական լեզվամտածողությամբ ձևավորված միավորները ժողովրդականից տարբերվում են իրենց ծագմամբ: Վերջինները ժողովրդական ծագում ունեն, որպես հանրության սկզբնական աշխարհաճանաչողության և հաղորդակցման գործընթացի յուրօրինակ միավորներ, իսկ առաջինները՝ որպես հաղորդակցման ստեղծագործական պրոցեսը դյուրացնող իրողություններ, որոնք իրենց ծագմամբ կապվում են հանրության գործունեության հոգևոր (բանահյուսություն, գրականություն, արվեստ, պատմություն և այլն) կյանքի հետ:

Խոսելով լեզվական պատրաստի կառույցների, մասնավորապես դարձվածքների մասին, Մ. Կոժինան դրանք բաժանում է երկու խմբի՝ գրքայինի և խոսակցականի¹²:

Գրքային դարձվածքները, որոնք փաստորեն լեզվական պատրաստի կառույցներ են, ըստ Կոժինայի, օգտագործվում են գիտական, հրապարակախոսական, պաշտոնական, գեղարվեստական ոճերում¹³, իսկ լեզվական այդ տարբերակները, ոճերը, առաջին հերթին, ենթադրում են լեզվի նորմավոր-

⁹ Այստեղ մենք նկատի չունենք խոսքի գեղագիտական կողմը: Այդ ձևերով նույնպես կարելի է գեղագիտական բարձր արդյունքի հասնել:

¹⁰ Լեզվական արհեստականության մասին մանրամասն տե՛ս Ռ. Իշխանյան, *Նշվաշխ.*, էջ 136—150:

¹¹ Տե՛ս Ռ. Ն. Շալունց, *Մամուլի և հրապարակախոսության լեզուն*, Երևան, 1987, էջ 11—127:

¹² М. Н. Кожина, *Стилистика русского языка*, М., 1977, с. 120—123:

¹³ Նույն տեղում, էջ 120—123:

ված մակարդակ և, մեր կարծիքով, դրական լեզվամտածողության արգասիք են: Իսկ ընդգծված կառույցները, ինչպես կարելի է հեշտությամբ համոզվել, հիմնականում որևէ բնագավառին վերաբերող տերմիններն են, կամ իրենց արտահայտած իմաստներով մարդկային կյանքի հոգևոր ասպարեզում ձևավորված և մշակութային գործունեության բնագավառում գործածվող կառույցներ են (աֆիլիեայան գարշապար, դանայան կարաս, նոյի ագռավ, արջի ծառայություն մատուցել և այլն), որոնցում եթե նույնիսկ կա աշխարհաճանաչողության գործընթաց, ապա այդ գործընթացը հոգևոր-մշակութային աշխարհաճանաչողության գործընթաց է: Սա նշանակում է, որ նման կառույցները ձևավորվում են աշխարհի գիտական ճանաչման սկզբունքներով, իսկ գիտական ճանաչողությամբ լեզվական հաղորդակցումը գրական լեզվամտածողության արգասիք է:

Այսպիսով, գրական և ժողովրդական լեզվամտածողությունները, ինչպես նաև նրանց հիման վրա ձևավորված խոսքերը հոմանիշային հատկություններով միմյանց հետ կապված իրողություններ են՝ առաջինները բովանդակության, երկրորդները՝ արտահայտության պլաններում:

Գրական և ժողովրդական լեզվամտածողությունների փոխհարաբերությունների, ինչպես նաև նրանց լեզվական դրսևորումների առնչությամբ չի կարելի կանգ չառնել մի այնպիսի հարցի վրա, ինչպիսին գեղարվեստական գրականության լեզվի խնդիրն է:

Այդ հարցը անմիջականորեն կապվում է այն դերի հետ, որ հասարակական կյանքում կատարում է գեղարվեստական գրականությունը:

Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը ընդհանուր առմամբ իրականացնում է երկու հիմնական դեր՝ ճանաչողական և գեղագիտական ներգործության: Առաջին դեպքում մենք գործ ունենք լեզվի տեղեկատվական, երկրորդ դեպքում՝ նրա գեղագիտական գործառույթի հետ: Սա նշանակում է, որ գեղարվեստական գրականության մեջ լեզուն նպաստում է ինֆորմացիայի գեղագիտական դրսևորմանը, որից էլ բխում են այն յուրահատկությունները, որոնք հատուկ են գեղարվեստական գրականության լեզվին:

Որպես գեղարվեստական գրականության լեզվի յուրահատկություններ, Ռ. Է. Ռոզենտալը նշում է հետևյալները. «1) հաղորդակցական և էսթետիկական գործառույթների միասնություն, 2) բազմառձայնություն, 3) գեղարվեստական արտահայտչական միջոցների առատ օգտագործում, 4) հեղինակի ստեղծագործական անհատականության դրսևորում»¹⁴:

Ինչպես երևում է ասվածից, գեղարվեստական գրականության արտահայտության պլանը միանշանակ գնահատական չի կարող ստանալ: Այստեղ հեշտորեն խաչավորվում են հեղինակի ստեղծագործական անհատականության և դրական հերոսների լեզվական ճաշակները, գրական ժանրերով ու ստեղծագործության թեմաներով պայմանավորված լեզվական դրսևորումները և այլ բաղադրատարրեր:

Սա նշանակում է, որ աշխարհաճանաչողության գործընթացը և նրա լեզվական արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ դրսևորվում է բազմաշերտ ձևով. գրական երկի հերոսների խոսքը, կապված նրանց սոցիալական ծագման, կրթական մակարդակի և այլ հատկանիշների հետ, հնչում է այլ կերպ, քան հեղինակայինը, որովհետև գեղարվեստական երկում հեղինակը մշտապես մտահոգված է հերոսների խոսքի ոճավորմամբ: Բարբառախոս հերոսի խոսքը հնչում է այլ կերպ, մտավորականինը՝ այլ կերպ, իսկ հեղինակի խոսքը, կարծեք, միջին տեղ է զբաղեցնում մի կողմից՝ հովվի և կթվորուհու, մյուս կողմից՝ ուսուցչի ու գիտնականի խոսքերի

¹⁴ Д. Э. Розенталь, Практическая стилистика русского языка, М., 1987, с. 60.

միջև՝ չհակադրվելով ու չհավասարվելով նրանց: Մենք առկա են այդպիսի երևույթներ (հակադրության և հավասարության—Ռ. Ա.), ապա դա պետք է համարել ասոցիատիվ գրոզի ստեղծագործական թերություն¹⁵:

Կեղարվեստական գրականության բազմաոճայնությունը, որպես գեղադիտական հաղորդակցման արտահայտության պլան, մեզ հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ գեղարվեստական գրականությունը, իբրև գործառական յուրատեսակ ոճ, լեզվամտածողության մեկ տեսակի արտահայտությունն է:

Մեր կարծիքով, գեղարվեստական գրականության մեջ կան թե՛ գրական, թե՛ ժողովրդական և թե՛ գուգորդվող տիպի լեզվամտածողություններ:

Երբ խոսում ենք գեղարվեստական գրականության մեջ տարբեր տիպի լեզվամտածողությունների մասին, դրանով մենք բնավ չենք նսեմացնում ստեղծագործության գեղագիտական արժեքը, այլ նշում ենք հեղինակների կողմից ժողովրդայնության հասնելու ուղիների տարբերությունը՝ նկատի ունենալով, որ ցանկացած լեզվամտածողության դրսևորման դեպքում ստեղծագործությունը կարող է լինել գեղագիտորեն կամ կատարյալ, կամ թերի:

Այսպես, նշվում է, որ հայ գրականության մեջ ժողովրդայնության հասնելու ամենակատարյալ հեղինակը Թումանյանն է, որովհետև իր ստեղծագործություններով ժողովրդի լեզվամտածողությունը լավագույն ձևով նա է արտահայտել, որն էլ դիտվում է որպես ժողովրդայնության հասնելու լավագույն շահանիշ¹⁶:

Եթե ժողովրդայնությունը ժողովրդի լեզվի և մտածողության արտահայտման շահանիշ է, ապա ժողովրդային չեն ո՛չ Րաֆֆու, ոչ Հովհ. Հովհաննիսյանի և ոչ էլ Տերյանի ստեղծագործությունները, որովհետև դրանք բավարար չափով հագեցված չեն ժողովրդական լեզվով:

Բայց մի՞թե այդպես է:

Հիշենք, թե ինչ է գրում Ստ. Զորյանը Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի լույս տեսնելու առթիվ. «...Երկրպագուներին թիվ չկար: Պահ մի մոռացվեցին մեր անվանի բանաստեղծները ամենուրեք՝ երեկոյաններում, ընտանիքներում, ընկերական շրջաններում արտասանվում էին Տերյանի սոսնձերն ու էլեգիաները: Սկսվել էր պարզապես Տերյանական շրջան, Տերյանի էպոխա: Օղը լիքն էր Տերյանով...»¹⁷: Իսկ Րաֆֆու մասին ժամանակակիցները հիշում են, որ նա ամենից շատ կարգացվող հեղինակն էր:

Այս ամենի պատճառն այն է, որ թե՛ Տերյանը, թե՛ Րաֆֆին և թե՛ մեր մյուս «ժողովրդայնության չհասած» հեղինակները լավագույն ձևով են արտահայտել ժողովրդի ցանկությունները, երազանքները, նրան հուզող գաղափարները: Հենց սրանք են ժողովրդայնության հասնելու իսկական ուղիները:

Գրողի ստեղծագործական ժողովրդայնությունը առաջին հերթին հանգեցնել ժողովրդական լեզվի, ժողովրդական բառ ու բանի գործածության, կարծում ենք, միակողմանի մոտեցում է: Բանն այն է, որ Գ. Սևակը նման եզրակացությունների է հանգել Թումանյանի ստեղծագործությունների վերլուծության և գնահատման առիթով, իսկ Թումանյանի ստեղծագործությունը թե՛ իր լեզվական ատաղձով և թե՛ մտածողությամբ, ինչպես տեսանք, միանգամայն ժողովրդական ծագում ունի: Այստեղից էլ՝ նման միակողմանիությունը:

Գրականության ժողովրդայնությունը առաջին հերթին պետք է փնտրել գրողի կողմից հասարակության առաջընթացին նպաստող գաղափարների, իդեալների արտահայտման և ապա հետո այդ գաղափարների ու իդեալների լեզվական դրսևորման մեջ:

15 Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986, էջ 61:

16 Հմմտ. Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 128—177:

17 Ստ. Զորյան, Հուշերի գիրք, Երևան, 1958, էջ 186—187:

«Անցյալի մեծ գրողների ժողովրդայնությունը,—կարդում ենք «Դրականագիտական բառարանում»,—արտահայտվել է շատ բազմազան ձևերով: Բայց ընդհանուրը նրանց համար այն է, որ նրանց ստեղծագործության մեջ միշտ այս կամ այն կերպ արտահայտվել է գաղափարական կապը ժողովրդի հետ, նրա աշխարհգացողությունը, պատկերացումներն ու իդեալները գեղարվեստորեն մարմնավորելու ձգտումը»¹⁸:

Այս տեսանկյունից ժողովրդային են ոչ միայն Արուսյանը, Թումանյանը, Իսահակյանը և ուրիշ շատ հեղինակներ, որոնց ստեղծագործություններին հիմնականում բնորոշ են բարբառային և ժողովրդախոսակցական լեզվատարրերի ու ժողովրդի բառ ու բանի դործածություն, այլև այն հեղինակները՝ Բաքի, Շահազիզ, Հովհաննիսյան, Մատուրյան, Տերյան և ուրիշներ. որոնց ստեղծագործությունները հագեցած չեն նման լեզվատարրերով: Ժողովրդայնությունը հիշյալ հեղինակների ստեղծագործությունները ոչ թե իրար հակադրելու, այլ նրանց ընդհանրություններն ընդգծելու միջոց է, իսկ տարբերությունը նրանց ստեղծագործություններում եղած լեզվամտածողության և այդ մտածողության արտահայտության մեջ է: Բանն այն է, որ ժողովրդայնությունը և ստեղծագործության գեղագիտական կատարելության չափանիշը Թումանյանի ստեղծագործություններում դրսևորվել են ժողովրդական լեզվամտածողությամբ՝ բարբառային ու ժողովրդախոսակցական լեզվատարրերով հանդերձ, իսկ Տերյանի և ուրիշների ստեղծագործություններում գրական լեզվամտածողությամբ՝ արևելահայ գրական հայերենին հատուկ նորմավորված լեզվատարրերով: Ուրեմն, այստեղ գործել են լեզվամտածողության երկու տարբեր եղանակներ՝ ժողովրդական և գրական՝ իրենց համապատասխան յուրահատկություններով:

Լեզվամտածողության այս երկու եղանակները առանձնակի սրությամբ հանդես եկան և միմյանց հակադրվեցին XIX դ. երկրորդ կեսից, իսկ ավելի ճիշտ՝ գրապայքարից հետո, երբ դրված էր աշխարհաբարի մշակման և կանոնարկման խնդիրը:

К ВОПРОСУ О ВАЗИМООТНОШЕНИИ ПЛАНА СОДЕРЖАНИЯ И ПЛАНА ВЫРАЖЕНИЯ ФУНКЦИОНАЛЬНЫХ ВАРИАНТОВ ЯЗЫКА

Р. Г. АВЕТИСЯН

Р е з ю м е

В процессе общения мы выделяем два способа языкового мышления—народный и литературный.

Народное языковое мышление—это образованный на основе познания мира процесс готовых синтагматических конструкций, который присущ в основном разговорному и, с некоторыми оговорками, также литературному и публицистическому стилям.

В отличие от народного, литературное языковое мышление является творческим процессом образованных относительно свободным сочетанием языковых элементов конструкций, где готовые языковые конструкции, которые, с определенными оговорками, проявляют существенные различия по отношению к предыдущим, не имеют такой частоты употребления, как народные.

Упомянутые способы языкового мышления, как речь, сформированная на их основе, являются реалиями, связанными синонимическими отношениями: первые—в плане содержания, вторые—в плане выражения.

¹⁸ Տե՛ս է՝ Գ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 124: